ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի և Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-086-17.09.2012-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) համար «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ արտոնագրային վճար վճարող համարվելու համար նախապայման հանդիսացող՝ տարեկան իրացման շրջանառության 6 միլիոն դրամի շեմը բարձրացնել մինչև 8 միլիոն դրամ՝ նպատակ ունենալով ընդլայնելու արտոնագրային վճար վճարող համարվող անձանց շրջանակը:

1. Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ արտոնագրային վճարների համակարգի կիրառության շրջանակների ընդլայնման քաղաքականության ուղղություն արդեն իսկ իրականացվում է, որի շրջանակներում, սակայն, նպատակահարմար է համարվել արտոնագրային վճարների համակարգի կիրառության շրջանակի ընդլայնումն իրականացնել տարբեր ուղղություններով: Մասնավորապես, արդեն իսկ մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով նախատեսվում է՝

1) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ արտոնագրային վճար վճարող համարվելու համար նախապայման հանդիսացող՝ տարեկան իրացման շրջանառության 6 միլիոն դրամի շեմը բարձրացնել մինչև 9 միլիոն դրամ.

2) ուժը կորցրած ճանաչել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 2 հավելվածը և դրանով նախատեսված գործունեության տեսակների մասով արտոնագրային վճարների համակարգը կիրառել նույն օրենքի NN 7 և 8 հավելվածներին համապատասխան: Արդյունքում, օրենքի N 2 հավելվածով սահմանված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերն արտոնագրային վճար վճարող կհամարվեն՝ անկախ տարեկան իրացման շրջանառության ընդհանուր գումարի 9 միլիոն դրամի շեմը գերազանցելու հանգամանքից (նշված նախագծի ընդունման դեպքում տարեկան իրացման շրջանառության ընդհանուր գումարի 9 միլիոն դրամի շեմը պահպանելու պահանջը կկիրառվի միայն «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով նախատեսված՝ պարզունակ գործունեության տեսակների համար).

3) արտոնագրային վճարների համակարգում ներառել գործունեության նոր տեսակներ:

2. Նախագծում պահպանված չեն օրենսդրական տեխնիկայի կանոնները: Նախագծի 1-ին հոդվածում՝

1) «28-ի ՀՕ-209» բառերն անհրաժեշտ է փոխարինել «22-ի ՀՕ-209-Ն» բառերով.

2) 1-ին հոդվածում «մասը» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով, «դրամ» բառը՝ «դրամը» բառով, իսկ «փոխել» բառը՝ «փոխարինել» բառով:

Ելնելով շարադրվածից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով ներկայացված առաջարկն արդեն իսկ իրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված օրենսդրական նախագծում, դեռ ավելին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հեղինակած օրենսդրական նախագծով առաջարկվում է «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ արտոնագրային վճար վճարող համարվելու համար նախապայման հանդիսացող՝ տարեկան իրացման շրջանառության 6 միլիոն դրամի շեմը մինչև 8 միլիոն դրամ բարձրացնելու փոխարեն բարձրացնել մինչև 9 միլիոն դրամ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փոփոխվում է արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց կողմից մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների, ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարի շեմը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն**:

Եզրակացություն

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) համար «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ արտոնագրային վճար վճարող համարվելու համար նախապայման հանդիսացող՝ տարեկան իրացման շրջանառության 6 միլիոն դրամի շեմի բարձրացնել մինչև 8 միլիոն դրամ՝ նպատակ ունենալով ընդլայնել արտոնագրային վճար վճարող համարվող անձանց շրջանակը:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ նախագծի ընդունումը չի կարող էականորեն ընդլայնել արտոնագրային վճար վճարող համարվող անձանց շրջանակները:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի չեզոք:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի ծախսերի փոփոխության չի հանգեցնի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական*** ազդեցություն, քանի որ Նախագծի ընդունմամբ կընդլայնվի արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց շրջանակը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-086-17.09.2012-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-209 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի երկրորդ մասը «6,0 մլն դրամ» բառերը փոխել «8,0 մլն դրամ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պայմանավորված է արտոնագրային վճարներ վճարող ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց եւ այլ տնտեսվարողների շրջանակը ավելացնելու հետ:

Ըստ ՀՀ Կառավարության 2012 թվականի գործունեության ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների՝ ծրագրվում է օրենսդրական բարեփոխումների միջոցով խթանել փոքր, գերփոքր տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաեւ տարբեր տնտեսական գործունեություն ծավալող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց զարգացմանը:

2010 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը տասնյակ հազարավոր քաղաքացիների հնարավորություն ընձեռեց իրենց գործունեությունը ծավալել՝ վճարելով արտոնագրային վճարներ, ինչը բնականաբար զերծ է պահում նրանց հարկային մարմինների կողմից պարբերաբար իրականացվող ստուգումներից եւ հաշվապահական լրացուցիչ գործունեություն ծավալելուց:

Ըստ Կառավարության ներկայացրած տվյալների՝ արդեն իսկ ունենք շուրջ 30 հազար արտոնագրային վճարներով գործունեություն ծավալողներ, վերջին մեկուկես տարում սա լուրջ ցուցանիշ է եւ անհրաժեշտություն է առաջացել 6 մլն դրամ տարեկան շրջանառության շեմը փոխարինել 8 մլն դրամի, նաեւ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ վերջին մեկուկես տարում շուրջ 20 % -ով ավելացել է ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ: